ISSN 2953-805X

ՀՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԵՒ ԱԶԳԱԳՐՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏԻ ԱՇԽԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ

7

NATIONAL ACADEMY OF SCIENCES, RA
INSTITUTE OF ARCHAEOLOGY AND ETHNOGRAPHY

PROCEEDINGS OF THE INSTITUTE OF ARCHAEOLOGY AND ETHNOGRAPHY

НАІА-7

НАЦИОНАЛЬНАЯ АКАДЕМИЯ НАУК, РА
ИНСТИТУТ АРХЕОЛОГИИ И ЭТНОГРАФИИ

ТРУДЫ ИНСТИТУТА АРХЕОЛОГИИ И ЭТНОГРАФИИ

ХАИА-7

IAE PUBLICATION ▪ ИЗДАТЕЛЬСТВО ИАЭ
YEREVAN 2025 ЕРЕВАН

ՀՀ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱ
ՀՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԵՒ ԱԶԳԱԳՐՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ

ՀԱԻԱ-7

ՀՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԵՒ ԱԶԳԱԳՐՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏԻ ԱՇԽԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ

7

ՀԱԻ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ
ԵՐԵՒԱՆ 2025

Տպագրվում է ՀՀ ԳԱԱ Հնագիտության և ազգագրության ինստիտուտի գիտական խորհրդի որոշմամբ

Published by decision of the Scientific Council of the Institute of Archaeology and Ethnography, NAS of RA

Խմբագրական խորհուրդ

Գլխավոր խմբագիր՝ *Արսեն Բոբոխյան*

Գլխավոր խմբագրի տեղակալ՝ *Տորք Դալալյան*

Խմբագրակազմ՝ *Լևոն Աբրահամյան, Պավել Ավետիսյան, Աստղիկ Բաբաջանյան, Ռուբեն Բադալյան, Միհրան Գալստյան, Ջուստո Թրաինա, Թեո վան Լինթ, Լորի Խաչատրուրեան, Ռուբեն Կարապետյան, Թամար Հայրապետյան, Արսեն Հարությունյան, Սուրեն Հոբոսյան, Դիանա Միրիջանյան, Ադամ Սմիթ, Պատրիկ Տօնապետեան, Պիտեր Քաուի*

Editorial Board

Editor-in-Cief: *Arsen Bobokhyan*

Vice-Editor-in-Chief: *Tork Dalalyan*

Editorial Stuff: *Levon Abrahamian, Pavel Avetisyan, Astghik Babajanyan, Ruben Badalyan, Peter Cowe, Patrick Donabédian, Mihran Galstyan, Arsen Harutyunyan, Tamar Hayrapetyan, Suren Hobosyan, Ruben Karapetyan, Lori Khatchadourian, Theo van Lint, Diana Mirijanyan, Adam Smith, Giusto Traina*

ՀԱԻԱ պարբերականի հերթական՝ 7-րդ հատորն ընդգրկում է ՀՀ ԳԱԱ Հնագիտության և ազգագրության ինստիտուտի, Հայաստանի ազգային պոլիտեխնիկական համալսարանի, Երևանի պետական համալսարանի, Հայոց ազգագրության և ազատագրական պայքարի պատմության ազգային թանգարանի, UCLA համալսարանի Ֆաուլերի թանգարանի (Լոս-Անջելես, Կալիֆորնիա) և Վիլնյուսի Եւրոպական հումանիտար համալսարանի (Լիտվա) հետազոտողների հոդվածներն ու հաղորդումները, որոնց նախնական տարբերակները որպես զեկուցում ներկայացվել են ՀՀ ԿԳՄՄՆ Բարձրագույն կրթության և գիտության կոմիտեի ֆինանսավորմամբ 2023թ. դեկտեմբերի 12–13-ին ՀԱԻ Սփյուռքի ուսումնասիրության բաժնի և Հայոց ազգագրության և ազատագրական պայքարի պատմության ազգային թանգարանի համատեղ կազմակերպած «Էթնոսոցիալական փոփոխությունները հայկական Սփյուռքում» գիտաժողովին: Հատորը եզրափակվում է Սփյուռքում հրատարակվող երկու պարբերականների վերջին համարների ընդարձակ գրախոսություններով և լրատուով:

ISSN 2953-805X
DOI:10.54503/2953-805X

© ՀՀ ԳԱԱ Հնագիտության և ազգագրության ինստիտուտ, 2025

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Ա. ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ՀՈԴՎԱԾՆԵՐ

I. ՀՀ–ՍՓՅՈՒՌՔ, ՀՀ–ԱՐՏԵՐԿԻՐ. ՓՈԽԿԱՊԵՐ ԵՎ ՓՈԽԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Ռոբերտ Կարապետյան
Հայաստանի Հանրապետության հետ Սփյուռքի միգրացիոն կապերի մասին 8

Հրաչիկ Վարդանյան
Մարիամ Հակոբյան
Ինքնության քաղաքականությունը՝ որպես պետություն-սփյուռք
գործակցության բաղադրիչ (ՀՀ–Սփյուռք հարաբերությունների պարագան) 21

Հրայր Ճէպէճեան
Մերձաւոր Արևելքի հայ համայնքներ և ՀՀ յարաբերութիւններ.
արդի միտումներ, մարտահրաւէրներ և հնարաւորութիւններ 34

Գայանե Հակոբյան
Նոր միգրանտների սոցիալ-մշակութային կյանքը Սփյուռքում.
հայաստանցի հարազատների դիտանկյունը 48

Սոնա Ներսիսյան
Ռուսաստանցի և հնդկաստանցի ներգաղթյալների
ինտեգրման փորձառությունը Հայաստանում 59

II. ԱՐԵՒԵԼՅԱՆ ԵՒՐՈՊԱՅԻ ՀԱՅ ՀԱՄԱՅՆՔՆԵՐ

Ստեփան Զահարկնիչ
Արևելյան Եվրոպայի հայ համայնքների հիշողության մշակույթը
և դրա վրա պատմական քաղաքականության ու ազգային ծրագրերի
ազդեցությունը արդի փուլում 72

Սվետլանա Պողոսյան
Վառնայի հայ համայնքի սոցիալ-մշակութային առանձնահատկությունները.
իրավիճակ, միտումներ և զարգացումներ 89

Գոռ Մարտիրոսյան
Լեհաստանում հայ ներգաղթյալների տնտեսական գործունեության տեսակները,
այդ գործունեության դիվերսիֆիկացիայի և փոփոխության արդյունքները 103

Լուսինե Տանաջյան
Սյուզաննա Բարսեղյան
Հայերը Չեխիայում. համայնքային կյանքի յուրահատկություններ 113

III. ԱՄՆ ՀԱՅ ՀԱՄԱՅՆՔ

Միհրան Գալստյան
«Հայրենադարձություն» եզրույթը Սփյուռքի արդի գործընթացների
համատեքստում. Լոս-Անջելեսի հայ համայնքի օրինակը 126

Վերժինե Սվազլյան
Ամերիկահայոց հայապահպանման մակարդակը՝ ըստ բանավոր մշակույթի գրառված նյութերի 139

IV. ՏԵՍԱԿԱՆ ԽՆԴԻՐՆԵՐ

Նելլի Խաչատրյան
Մարիամ Հարությունյան
Կրոնատածության փոխանցումն ընտանիքում. տեսական խնդիրներ 156

Ռուբեն Օհանջանյան
Սոցիալական հեռավորության չափման՝ Բոգարդուսի սանդղակի կիրառման յուրահատկությունները 167

Բ. ՁԱՆԱՁԱՆՔ

V. ՀԱՂՈՐԴՈՒՄՆԵՐ

Կարեն Ասատրյան
Պոլսահայ կրթական համակարգի վկայագրեր և վիճակացույցներ (19-րդ դարավերջ – 20-րդ դարասկիզբ) 176

Սալվինե Մարկոսյան
«Հայաստան» շաբաթաթերթի դերը պոլսահայ մշակութային կյանքում 183

VI. ՑՈՒՑԱՀԱՆԴԵՍ

Կասիա Արմենյան
Լույսով մնաք. Հայրենիքի և Սփյուռքի տեսլականները 188

VII. ԳՐԱԽՈՍԱԿԱՆ

Տորք Դալալյան
Լուսինե Հայրիյան
Մնահիտ Խեչոյան
Études arméniennes contemporaines, 2023, №15.
Ֆրանսիայի հայալեզու մամուլը և անդրազգային տարածույթի ստեղծումը 200

Անդրանիկ Տագէսեան
Հայկազեան հայագիտական հանդէսի 43-րդ և 44-րդ հատորներուն չորս գիրքերը 204

VIII. ԼՐԱՏՈՒ

Միլզան Բոնապեան
Հայագիտական ամառնային խտացեալ դասընթացքին 40-րդ տարին. Վենետիկի մեջ՝ հայկական աշխարհ 218

ԼՈՒՍԱՆԿԱՐՆԵՐ 221

ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՀԵՂԻՆԱԿՆԵՐԻ ՄԱՍԻՆ 230

II

ԱՐԵՎԵԼՅԱՆ ԵՎՐՈՊԱՅԻ ՀԱՅ ՀԱՄԱՅՆՔՆԵՐ

DOI: 10.54503/2953-805X-2025.7-103

Գոռ Մարտիրոսյան, *ա.գ.թ.*
ՀԱՊՀ

ԼԵՀԱՍՏԱՆՈՒՄ ՀԱՅ ՆԵՐԳԱՂԹՅԱԼՆԵՐԻ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՏԵՍԱԿՆԵՐԸ, ԱՅԴ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԴԻՎԵՐՍԻՖԻԿԱՑԻԱՅԻ ԵՎ ՓՈՓՈԽՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ

*Միգրացիայ*ի տեմպերն ու օտարերկրացիների աճող թիվն ընդունող երկրներում ծնում են բազմաթիվ մարտահրավերներ, որոնք կապված են մշակութային, սոցիալական, քաղաքական, կրոնական, իրավական *ասպեկտ*ների հետ, իսկ *միգրացիայ*ի և տեղական համայնքների վրա դրա ազդեցության վերաբերյալ հավաստի տեղեկատվության ու մասնագիտական հետազոտությունների բացակայությունը հաճախ լուրջ մտահոգություններ է առաջ բերում ընդունող երկրում:

Տնտեսապես զարգացած՝ հարաբերականորեն ապահով երկրները, որոնք վարում են *պրոմիգրացիոն* քաղաքականություն, հանդես են գալիս որպես *միգրացիայ*ի հիմնական նպատակակետեր: Դրանցից է նաև Լեհաստանը, որտեղ ներգաղթյալների հիմնական հոսքերը եղել և շարունակվում են Ուկրաինայից, Բելառուսից, Խորհրդային Միության նախկին երկրներից, ինչպես և Վիետնամից ու Չինաստանից:

Վերջին տասնամյակում լեհական գիտական գրականության մեջ աճել է ներգաղթյալների ձեռներեցության վերաբերյալ հետաքրքրությունը[1]: Այս հիմնախնդիրը վերլուծելիս՝ հիմնականում ուշադրության են արժանացել չինացիները, վիետնամցիները և ուկրաինացիները, իսկ թվաքանակով ավելի փոքր խմբերը դուրս են մնացել ուշադրությունից: Մինչդեռ, օրինակ՝ հայերի ձեռներեցության մասին Լեհաստանում հիշատակումներ կան դեռևս 14–15-րդ դարերից: Հոդվածի նպատակը՝ 20-րդ դարավերջում և 21-րդ դարասկզբում Լեհաստանում հայազգի ներգաղթյալների տնտեսական գործունեության տեսակների և այդ գործունեության փոփոխության ու *դիվերսիֆիկացիայ*ի արդյունքների ներկայացումն է:

Հիմնաբառեր՝ ներգաղթյալներ, ձեռներեցություն, հայեր, Լեհաստան, առևտուր, գործունեության տեսակի փոփոխություն, դիվերսիֆիկացիա:

Ներածություն

Ըստ լեհ հետազոտող Տոմաշ Մարչինիակի՝ կարելի է առանձնացնել դեպի Լեհաստան հայերի *միգրացիայի* երեք խոշոր փուլ[2]: Առաջինը սկսվում է 14-րդ դ. վերջին, երկրորդը՝ Երկրորդ Աշխարհամարտից հետո, իսկ երրորդը վերաբերում է 1980-ականների վերջին և 1990-ականներին: Արդյունքում՝ Լե-

---

1 Այս հարցերի շուրջ առավել մանրամասն տե՛ս Glinka 2013; Nestorowicz 2013; Brzozowski, Pędziwiatr 2015; Brzozowska 2015; Kosała 2016; Andrejuk 2017; Majkut 2017; Andrejuk, Oleksiyenko 2018; Jelonek, Glinka 2020:

2 Marciniak 1998, 127.

հաստանի Հանրապետությունում (ԼՀ) ձևավորվել են հայկական «հին» և «նոր» համայնքները:

Ըստ հետազոտող Պավել Նիեչոյա-Օստրովսկու՝ ԼՀ տարածքում հայերի բնակեցումը սկսվել է ավելի վաղ՝ 11–12-րդ դարերում. այդ շրջանում մեծ թվով հայեր բնակություն են հաստատել Հեռավոր Արևելքը Արևմտյան Եվրոպային կապող առևտրային ճանապարհի երկայնքով՝ հիմնականում զբաղվելով առևտրով (դառնալով Արևելքից ներմուծվող ապրանքների հիմնական մատակարարը) և արհեստագործությամբ (ոսկերչություն, կաշեգործություն, դարբնություն ևն)[3]: ԼՀ-ում հայերը հիմնել են նաև բանկեր, աշխուժացրել քաղաքների տնտեսական կյանքը՝ կապեր հաստատելով մոտիկ և հեռավոր առևտրային կենտրոնների հետ: Հայերից շատերն առանցքային դեր են ունեցել երկրի տնտեսական, հաճախ նաև՝ գիտական, մշակութային ու քաղաքական կյանքում:

20-րդ դարավերջում և 21-րդ դարասկզբում, պայմանավորված երկրաշարժով, ԽՍՀՄ փլուզմամբ, տնտեսական ծանր պայմաններով ու պատերազմական իրավիճակով, ՀՀ-ից սկիզբ առած մեծ արտագաղթի արդյունքում հայերի մի մասը որպես բնակության նոր վայր ընտրեց ԼՀ-ը: Սկզբնական փուլում առավելապես տղամարդիկ էին մեկնում ԼՀ՝ կարճաժամկետ սեզոնային այցերով, սակայն ժամանակի ընթացքում նրանց մի մասը հաստատվեց՝ աստիճանաբար բերելով նաև ընտանիքի անդամներին, հրավիրելով ընկերներին, ծանոթներին ու բարեկամներին: Այդ տարիներին ԼՀ տեղափոխվեցին հայեր ոչ միայն ՀՀ-ից, այլև նախկին ԽՍՀՄ այլ հանրապետություններից[4]:

*Միգրացիայ*ի սկզբնական շրջանում հայերը հիմնականում հաստատվում էին խոշոր քաղաքներում, որտեղ շուկաներում իրացնում էին ՀՀ-ից բերված ապրանքները, օրինակ՝ տարատեսակ աշխատանքային գործիքներ, զարթուցիչներ, մեքենաների համար նախատեսված ձայնարկիչներ, ձկնորսական պարագաներ ևն: Հայերը ԼՀ-ից հաճախ վերադառնում էին ոչ թե վաստակած գումարով, այլ ՀՀ-ում պահանջարկ ունեցող լեհական ապրանքներով, օրինակ՝ *կոնֆետ*ներ, սպիրտ, հագուստ ևն, ու շարունակում առևտուրը ՀՀ-ում: Ժամանակի ընթացքում առևտրի այդ *մոդել*ը որոշակիորեն փոխվեց, և հայ ներգաղթյալները սկսեցին ԼՀ-ում պահանջարկ ունեցող ապրանքները ներկրել սահմանակից երկրներից՝ հիմնականում Ուկրաինայից ու Բելառուսից, ինչը թույլ տվեց կրճատել ճանապարհային ծախսերը և ավելի արդյունավետ օգտագործել ժամանակը:

Իրավիճակը սկսեց փոխվել 1998-ից, երբ ԼՀ *միգրացիոն* քաղաքականությունը խստացվեց, և ԼՀ մեկնելու համար, ի թիվս այլ երկրների քաղաքացիների, հայերի համար ևս պահանջվեց մուտքի արտոնագիր: Խստացվեցին նաև երկրի ներսում գտնվող *միգրանտ*ներին առաջադրվող պահանջները: Արդյունքում՝ ԼՀ-ում գտնվող հայերի մի մասը ստիպված եղավ վերադառնալ ՀՀ, մի մասը տեղափոխվեց հարևան երկրներ, իսկ ոմանց էլ հաջողվեց տեղափոխվել եվրոպական ավելի զարգացած երկրներ: Արդյունքում, ըստ ԼՀ հայ համայնքի

3 Nieczuja–Ostrowski 2011, 132–133.

4 Łotocki 2008, 65.

ներկայացուցիչների գնահատականի, հայերի թիվը ԼՀ-ում կրճատվեց ավելի քան երկու անգամ:

Հատկանշական է, որ ԼՀ-ում ապրող ներգաղթյալների շրջանում տոկոսային հարաբերությամբ՝ ձեռներեցների ամենաբարձր ցուցանիշը հայերի, այնուհետև՝ վիետնամցի ներգաղթյալների մեջ է[5]: Վերոնշյալ հեղինակների կարծիքով՝ այդ հանգամանքը կարելի է բացատրել հայերի ու վիետնամցիների՝ ԼՀ-ում գտնվելու հարաբերականորեն ավելի երկար ժամանակահատվածով, ինչպես նաև մշակութային առանձնահատկություններով: ԼՀ հայ համայնքի ներկայացուցիչների հետ շփումը ցույց է տալիս, որ առաջին սերնդի հայ ներգաղթյալների ճնշող մեծամասնությունը՝ հատկապես տղամարդիկ, շարունակում են զբաղվել իրենց *բիզնես*ով կամ ներգրավված են ընտանիքի այլ անդամների ձեռնարկած *բիզնես*ում: Իրավիճակն այլ է երկրորդ սերնդի հայ ներգաղթյալների դեպքում: Նրանցից շատերը, ծնվելով, մեծանալով և կրթություն ստանալով ԼՀ-ում, չեն շարունակում ընտանեկան *բիզնես*ը՝ ընտրելով գործունեության այլ ոլորտ կամ անցնելով հաստիքային աշխատանքի:

Լեհական և ԼՀ-ում տեղակայված միջազգային տարբեր կառույցների գնահատականներով՝ ԼՀ-ում ձեռներեցությամբ զբաղվող ՀՀ քաղաքացիների թիվը տատանվում է՝ 482–642[6]: Իհարկե, պետք է ենթադրել, որ իրականում հայազգի ձեռներեցների թիվը մի քանի անգամ ավելի մեծ է, քանի որ վերոնշյալ տվյալները վերաբերում են միայն ՀՀ քաղաքացիներին, մինչդեռ շատ հայեր արդեն ունեն ԼՀ քաղաքացիություն և ներառված չեն այդ տվյալներում: Կան նաև հայազգի ձեռներեցներ, որոնք իրենց գործունեությունը ծավալել են ազգությամբ լեհ ամուսնու կամ կնոջ տվյալներով:

ԼՀ-ում հայերի ձեռնարկատիրական գործունեության վերլուծություն

Հոդվածում ներկայացվող արդյունքները կազմում են 2018 թ. ԼՀ 11 մարզերում իրականացված ծավալուն հետազոտության մի մասը: Հետազոտության ընթացքում իրականացվել են դեմ առ դեմ հարցաթերթիկային հարցումներ և հարցազրույցներ ԼՀ-ում բնակվող և գրանցված, մասնավոր տնտեսական գործունեություն ծավալող՝ ազգությամբ հայ 101 ձեռներեցի հետ: Հետազոտությունը վերաբերել է 20-րդ դարավերջում և 21-րդ դարասկզբում ԼՀ-ում հաստատված հայ ներգաղթյալների ձեռներեցության զարգացման նախադրյալներին, խոչընդոտներին և ձեռներեցությամբ զբաղվելու շարժառիթներին: Ուշադրության է արժանացել նաև հայ ներգաղթյալների ընտրած գործունեության տեսակի հարցը: Փորձելով բացահայտել ԼՀ-ում հայ ներգաղթյալների *բիզնես* գործունեության տեսակները՝ հարցված ձեռնարկություններից պահանջվել է նշել գործունեության տեսակը՝ ընկերության հիմնադրման պահին, և հնարավոր փոփոխությունները, եթե այդպիսիք եղել են ժամանակի ընթացքում:

---

5 Brzozowski i Pędziwiatr 2015, 189.

6 Andrejuk 2015, 237; Łukaszczyk 2015, 41.

Ինչպես հայ, այնպես էլ այլ էթնիկ խմբերի ներգաղթյալները ԼՀ-ում ձեռներեցությամբ զբաղվելիս հիմնականում ընտրում են գործունեության պարզ տեսակներ: Դա հաճախ բացատրվում է մեկնարկային խիստ սահմանափակ կապիտալի առկայությամբ, գործունեության պարզ ոլորտների մուտքային և ելքային՝ հարաբերականորեն ցածր պատնեշներով, ինչպես և ներգաղթյալների՝ տվյալ երկրում գտնվելու ժամանակային անորոշությամբ: Հայազգի ներգաղթյալների դեպքում, ձեռնարկատիրական գործունեություն սկսելիս, գերիշխող տեսակը առևտուրն էր, որը նշել է 77 (76,24 %) ձեռնարկատեր: Գերակշռող մասը զբաղվել է կենցաղային ապրանքների առևտրով՝ հիմնականում խոշոր և միջին քաղաքներում տեղակայված շուկաներում: Երկրորդ ոլորտը, որի հանդեպ, սակայն, շատ ավելի քիչ հետաքրքրություն կար, տարբեր տեսակի ծառայություններն էին: Նման գործունեությամբ զբաղվել է 13 հարցվող (12,87 %), ովքեր հավելել են, որ այդ ընտրությունը կապված է իրենց կյանքի ավելի վաղ փուլերում ձեռք բերած փորձի, հմտության ու կարողությունների հետ:

Այս ծառայությունները կարելի է բաժանել երկու խմբի, որոնցից առաջինը վերաբերում է պարզ ծառայություններին, ինչպիսիք են տրանսպորտը, շինարարությունը կամ էլեկտրական սարքավորումների վերանորոգումը, իսկ երկրորդը՝ առավել բարձր մակարդակի ծառայություններին, ինչպես, օրինակ՝ երկու ձեռնարկատեր ատամնաբուժական փոքր կլինիկաների սեփականատերեր էին, երկուսը ղեկավարում էին երդվյալ թարգմանչական գրասենյակներ, և մեկը մատուցում էր իրավաբանական ծառայություններ: Հարցված խմբից 8 անձ (7,92 %) ներգրավված է եղել *գաստրոնոմիայ*ի ոլորտում՝ հիմնականում փոքր ռեստորաններ, սննդի կետեր և լավաշի արտադրություն: Կարևոր է ընդգծել, որ այդ ձեռնարկատերերի մեծ մասն առաջարկել է ԼՀ համար ծանոթ կովկասյան խոհանոց, իսկ ավելի փոքր մասը՝ ընդգծված հայկական խոհանոց: Ամփոփելով ձեռնարկության սկզբնավորման ընթացքում գործունեության տեսակների վերլուծությունը՝ նշենք, որ արտադրությամբ զբաղվել են միայն 3 ձեռնարկատերեր (2,97 %), որոնք ներգրավված են եղել շինարարական արտադրանքի, այդ թվում՝ պատուհանների և *դեկորատիվ* քարի արտադրության մեջ [աղ. 1]:

Ժամանակի ընթացքում ձեռք բերելով փորձ և նոր հմտություններ (հատկապես լեզվական) և հիմնվելով տնտեսական հաշվարկների վրա՝ հարցված ձեռնարկատերերից ոմանք փոխել են իրենց *բիզնես*ի տեսակը կամ *դիվերսիֆիկացրել* են այն՝ ընդլայնելով իրենց սկզբնական գործունեությունը նոր ոլորտներում: Հարցված խմբում 22 ձեռնարկատեր (21,8 %) փոխել էր *բիզնեսի պրոֆիլ*ը, 23 ձեռնարկատեր էլ (22,8 %) *դիվերսիֆիկացրել* էր այն:



Գծանկար 1. Գործունեության տեսակի փոփոխություն և դիվերսիֆիկացում

Աղյուսակ 1.
Լեհաստանում հայ ներգաղթյալների գործունեության տեսակը
(Աղբյուրը՝ հեղինակի հետազոտություններ)

գործունեության տեսակը	**գործունեության սկիզբ**		**2018 թ.**	
	պատասխանների քանակ (101)	**մասնակցություն [%]**	**պատասխանների քանակ (101)**	**մասնակցություն [%]**
առևտուր	77	76,2	53	52,5
ծառայություններ	13	12,9	14	13,9
գաստրոնոմիա	8	7,9	18	17,8
արտադրություն	3	3,0	2	1,9
միաժամանակ մի քանի տեսակի գործունեություն	0	0	14	13,9

Նշենք, որ 8 հարցվողներ հայտարարել են ինչպես իրենց գործունեության փոփոխության, այնպես էլ *դիվերսիֆիկացման* մասին, 4 դեպքում ձեռնարկատերերը նախ որոշել են փոխել իրենց սկզբնական *բիզնես*ի տեսակը, այնուհետև՝ *դիվերսիֆիկացրել* այն՝ մուտք գործելով գործունեության ևս մեկ նոր ոլորտ: Եւս 4 ձեռնարկատեր սկզբում *դիվերսիֆիկացրել* էր գործունեությունը և որոշ ժամանակ անց հրաժարվել սկզբնական *բիզնես*ից՝ կենտրոնանալով բացառապես նոր *բիզնես*ի վրա, հետևաբար՝ սկզբնական շրջանի համեմատ փոխել էր գործունեության տեսակը:

Նկարագրված փոփոխությունները վերաբերել են, ընդհանուր առմամբ, 37 ձեռնարկությունների (36,6 %): Բիզնեսի *դիվերսիֆիկացման* կամ փոփոխման միջոցով իրենց *բիզնես*ը զարգացրած մարդկանց խմբում 19 ձեռնարկատեր (51,4 %) ունեցել է բարձրագույն կրթություն, 16-ը (43,2 %)՝ միջնակարգ, իսկ 2-ը (5,4 %)՝ միջին մասնագիտական կրթություն: Հարկ է ընդգծել, որ այս խմբի 86,5 %-ը տղամարդիկ են, 13,5 %-ը՝ կանայք: Ձեռնարկատերերի միջին տարիքը, ովքեր որոշել են փոխել կամ *դիվերսիֆիկացնել* իրենց գործունեությունը, կազմել է 44,8 տարի:

ԼՀ-ում հայերի ձեռնարկատիրական գործունեության փոփոխությունների արդյունքում հետազոտության պահին (2018 թ.) առևտրով զբաղվել է 53 (52,5 %) ձեռներեց, ինչը նշանակում է սկզբնական ժամանակաշրջանի համեմատ նվազում մոտ 32 %-ով: Հարցվածներն ընդգծել են, որ առևտուրն այնքան էլ շահութաբեր չէ, որքան գործարկման պահին: Մասնավորապես, ընդգծվել են բարձր մրցակցությունը, ցածր մարման և բարձր պետական տուրքերը: Հայ ներգաղթյալների իրականացրած առևտուրն ունի ավանդական բնույթ՝ շատ դեպքերում փոքր խանութների տեսքով, որոնք գործում են տեղական (քաղա-

քային) կամ առավելագույնը՝ տարածաշրջանային (մարզային) շուկաներում: Դրանց գործունեության հիմնական ոլորտը կենցաղային տեխնիկայի, էլեկտրոնային սարքերի, գործիքների և հագուստի առևտուրն է: Առևտրով զբաղվող ձեռներեցներից մեկն իրականացնում է վառելիքի (նավթամթերքի) մեծածախ առևտուր, մյուսը՝ հայկական ծագման գինիների մեծածախ առևտուր, իսկ երրորդը՝ *պրոթեզ*ների և ատամնաբուժական սարքավորումների ու բուժանյութերի առևտուր:

*Գասպրոնումիա*ի ոլորտում զբաղված ընկերությունների թիվը, բիզնես սկսելու սկզբնական ժամանակահատվածի համեմատ, աճել է, և 2018-ին նման բիզնեսով զբաղվել է 18 (17.8 %) ձեռնարկատեր, ինչը նշանակում է 125 % աճ: Այս խումբը ներառում է 11 ռեստորան, 1 ռեստորանային ցանց, հացաբուլկեղենի 2 արտադրամաս-խանութ, հացաբուլկեղենի 1 արտադրամաս-խանութների ցանց և 1 ընկերություն, որը մասնագիտացած է *շաուրմա*ի արտադրության մեջ: Բացի այդ, մի ընկերություն մեծ քանակով արտադրում է լավաշ, որը հիմնականում վաճառվում է այլ ձեռնարկությունների (հիմնականում՝ ռեստորանների), իսկ մեկ ձեռնարկատեր զբաղվում է ծովափին արագ սննդի *(ֆաստֆուդ)* վաճառքով: Ներգաղթյալ ձեռներեցներն ընդգծել են, որ սննդի ոլորտի զարգացումը մի կողմից՝ կապված է բնակչության գնողունակության բարձրացման և ուտելու նախասիրությունների փոփոխության, իսկ մյուս կողմից՝ հայ ներգաղթյալների առաջարկների փոփոխության հետ, այսինքն՝ խոհարարներն աստիճանաբար հայ ավանդական ուտեստները հարմարեցրել են լեհական ճաշակին: Առաջարկվող ապրանքների լայն տեսականուց լեհ սպառողներին հատկապես հետաքրքրում է հայկական լավաշը, պատշաճ համեմված խորոված միսը և հատկապես՝ խորոված բանջարեղենը (առավել հաճախ՝ սմբուկ, պղպեղ, լոլիկ): Այս ոլորտում աշխատող ձեռներեցները հայկական ճաշատեսակների կողքին հաճախ առաջարկում են նաև վրացական ուտեստներ:

Ծառայություններ մատուցող ձեռնարկությունների վերլուծություն

2018 թ. ծառայությունների մատուցմամբ զբաղվել է 14 ձեռնարկատեր (13,9 %), ինչը նշանակում է համեմատաբար փոքր աճ՝ 8 % գործունեության սկզբնական ժամանակահատվածի համեմատ: Այս ոլորտում կարելի է նկատել գործունեության համեմատաբար լայն բազմազանություն: Գործում է *տրանսպորտ*ային 3 կազմակերպություն, շինարարական 2 *ֆիրմա*, ատամնաբուժական 2 *կլինիկա*, տարբեր տեսակի սարքավորումների վերանորոգման 2 ձեռնարկություն: Բացի այդ, նշվել են հետևյալ ուղղությունները. համերգների կազմակերպում, ավտոտեխսպասարկում, իրավաբանական ծառայություններ, թարգմանչական ծառայություններ և քանդակագործություն ու քարի մշակման տարբեր աշխատանքներ: Նշված ուղղությունների ընտրությունը պայմանավորված է ձեռներեցների կրթությամբ կամ ՀՀ-ում իրականացրած աշխատանքի բնույթով: Ուշագրավ է, որ ատամնաբուժական և իրավաբանական ծառայություններ մատուցող ձեռներեցները նախ՝ իրականացրել են նույն աշխատանքը այլ կազմակերպություններում՝ որպես հաստիքային աշխատողներ, և

կուտակելով անհրաժեշտ փորձ ու կապիտալ՝ հիմնել են իրենց ձեռնարկությունները: Հարցվողների կարծիքով՝ ծառայությունների ոլորտի բիզնես գործունեությունն ունի որոշակի յուրահատկություններ: Այստեղ շատ բան կախված է *պրոֆեսիոնալիզմ*ից, վստահությունից, սպառողների նախասիրություններից ու ճաշակից: Հետևաբար՝ անհատական յուրահատուկ մոտեցումների ու հեղինակության շնորհիվ ավելի դյուրին է մրցակցել միջազգային մեծ *կորպորացիա*ների հետ, քան այլ՝ ավելի *սպանդարտ* ոլորտներում: Այս ոլորտը կարելի է դիտարկել որպես սողանցք, որ կարող են հաջողությամբ օգտագործել ներգաղթյալները:

Հայ ներգաղթյալները ԼՀ-ում հազվադեպ են ձեռնարկում արտադրական գործունեություն: Հարցված ձեռներեցներից՝ 2018-ին արտադրությամբ զբաղվել են միայն 2-ը (1,9 %): Արտադրական գործունեության հիմնական թերությունը, որ նշել են հարցվողները, վերաբերում է համեմատաբար խոշոր նախնական կապիտալի անհրաժեշտությանը՝ կապված արտադրական միջոցների, համապատասխան տարածքի, հումքի, որոշ դեպքերում նաև՝ *տրանսպորտ*ային միջոցների ձեռքբերման կամ վարձակալության հետ: Վերոնշյալ ձեռներեցներից առաջինը զբաղվում է պատուհանների ու դռների արտադրությամբ, երկրորդը՝ ջեռուցիչների, իսկ գործունեության տեսակի ընտրությունը պայմանավորված է նրանց կրթությամբ և ՀՀ-ում իրականացրած աշխատանքով:

Հետազոտությանը մասնակցած 14 (13,9 %) ձեռներեց միաժամանակ իրականացրել է մի քանի տարբեր ոլորտներում գործունեություն: Նրանցից 5-ը զբաղվել են և՛ առևտրով, և՛ տարբեր տեսակի ծառայությունների մատուցմամբ, 3-ը՝ առևտրով և ռեստորանային բիզնեսով, իսկ մյուսները համատեղել են տարբեր տեսակի ծառայությունների մատուցումը:

Ի մի բերելով գործունեության տեսակը փոխած հայ ձեռներեցների խմբի վերաբերյալ վերլուծությունը (22 մարդ՝ 21,8 %)՝ հարկ է ընդգծել, որ նրանցից 17-ը (տվյալ խմբի 77,3 %-ը) հրաժարվել է առևտրից, որոնցից 9-ը տեղափոխվել է *գաստրոնոմիա*յի ոլորտ, 7-ը սկսել է մատուցել տարբեր տեսակի ծառայություններ, 1 ընկերություն կենտրոնացել է արտադրական գործունեության վրա: Մնացած 5 ձեռնարկատերերից, ովքեր փոխել են իրենց գործունեության տեսակը՝ 1-ը, որ սկզբնական շրջանում զբաղվել էր արտադրությամբ, սկսել է զբաղվել վառելիքի մեծածախ առևտրով, 2 ձեռներեց, որ նախկինում զբաղված էին ծառայությունների մատուցմամբ, տեղափոխվել են *գաստրոնոմիա*յի ոլորտ, 1-ը փոխել է մատուցված ծառայության տեսակը, իսկ 1-ը՝ արտադրանքի տեսակը: Կարելի է ասել, որ ԼՀ-ում հայ ներգաղթյալները հիմնականում զբաղվել են առևտրով, հատկապես՝ գործունեության սկզբնական փուլում: Սակայն ժամանակի ընթացքում գործունեության այդ տեսակն իր տեղը զիջել է տարատեսակ ծառայությունների մատուցմանը և առավելապես՝ *գաստրոնոմիկ* ուղղվածության *բիզնես*ներին:

Ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ հայ ձեռնարկատիրական գործունեությունը ենթարկվում է *էվոլյուցիոն* փոփոխությունների և *դիվերսիֆի-*

կացման: Հարցված 101 ձեռներեցներից 37-ը (36,6 %) նշել են, որ մտադիր են փոխելու իրենց գործունեության տեսակը կամ ընդլայնելու այն՝ ներառելով այլ ուղղություններ: Կարևոր է շեշտել, որ գործունեության տեսակի փոփոխություն կատարած բոլոր ձեռներեցներն էլ գոհ են այդ փոփոխության արդյունքներից, իսկ *դիվերսիֆիկացիա* իրականացրածների մեջ արդյունքներից գոհ են 18-ը (78,3 %): Կարելի է նաև ավելացնել, որ թե՛ փոփոխության, թե՛ *դիվերսիֆիկաց*ման դեպքում հարցվողները, որպես այդ քայլերի հիմնական շարժառիթ, նշել են նոր *բիզնես* հնարավորություն գտնելու, *բիզնես*ի շահութաբերությունը մեծացնելու ցանկությունը, ինչպես նաև կարևոր դեր է ունեցել բնակության նոր երկրում ժամանակի ընթացքում կուտակած գիտելիքների ու փորձի արդյունքում ձևավորված վստահությունը:

Եզրահանգումներ

1990-ականների տնտեսական ճգնաժամի հետևանքով ՀՀ-ից արտագաղթած՝ աշխատունակ տարիքի շատ (տղա)մարդիկ որպես ուղղություն ընտրեցին ԼՀ-ը, որտեղ նրանց մեծ մասը՝ առևտրից բացի աշխատանքի այլ տարբերակ նույնիսկ չի էլ դիտարկել, քանի որ ընկերների, ծանոթների կամ հարազատների տեղեկությունների հիման վրա նրանք եկել էին ԼՀ՝ գործունեության արդեն պատրաստի հայեցակարգով: Արդյունքում՝ ԼՀ-ում հայ ներգաղթյալների ձեռներեցության գերիշխող տեսակը եղել է առևտուրը, հատկապես՝ գործունեության սկզբնական փուլում: Սակայն ժամանակի ընթացքում հայ ներգաղթյալները սկսել են ավելի շատ զբաղվել ռեստորանային բիզնեսով ու տարբեր տեսակի ծառայությունների մատուցմամբ: Թե՛ սկզբնական, թե՛ հետազոտության իրականացման փուլում (2018 թ.) քիչ են եղել արտադրությամբ զբաղվող ձեռներեցները:

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

ANDREJUK 2015
Andrejuk K., Bycie imigrantką jako zasób i jako bariera. Prowadzenie działalności gospodarczej w Polsce w narracjach imigrantek z krajów krajów ZSRR // Studia Socjologiczne, 2015, № 1, 229–258.
[Ներգաղթյալ լինելը՝ որպես ռեսուրս և որպես արգելք: Լեհաստանում բիզնեսվարումը՝ նախկին ԽՍՀՄ երկրներից եկած ներգաղթյալների պատմություններով // Սոցիոլոգիական հետազոտություններ, 2015, № 1, 229–258]:

BRZOZOWSKI, PĘDZIWIATR 2015
Brzozowski J., Pędziwiatr K., Pushed to the mainstream market: the case of immigrant entrepreneurs in Lesser Poland // Cross-Border Migration and its Implications for the Central European Area, Bratislava, Institute for Sociology of the Slovak Academy of Sciences, 2015, 178–198.

ŁOTOCKI 2008
Łotocki Ł., Między swojskością a obcością: Imigranci z Armenii w Polsce, Warszawa "Wydawnictwo Aspra", 2008, 303 s.
[Հայրենիքի և օտարության միջև. Հայաստանից ներգաղթյալները Լեհաստանում, Վարշավա, «Ասպրա», 2008, 303 էջ]:

ŁUKASZCZYK 2015
Łukaszczyk K., Imigracja biznesowa. Imigracja cudzoziemców do Polski w celach biznesowych, Warszawa, "Krajowy Punkt Kontaktowy Europejskiej Sieci Migracyjnej w Polsce", 2015, 81 s.
[Բիզնես ներգաղթ. Օտարերկրացիների ներգաղթը Լեհաստան՝ բիզնես նպատակներով, Վարշավա, «Եվրոպական միգրացիոն ցանցի ազգային կոնտակտային կետ Լեհաստանում», 2015, 81 էջ]:

MARCINIAK 1998
Marciniak T., Trzecia fala, trzeci aspekt. Nowa zaradność ormiańskiej imigracji w Polsce, Warszawa, «Przegląd Polonijny», 1998, 127 s.
[Երրորդ ալիքը, երրորդ կողմը. հայոց ներգաղթի նոր հնարամտությունը Լեհաստանում, Վարշավա, «Պոլոնիայի ակնարկներ», 1998, 127 էջ]:

NIECZUJA-OSTROWSKI 2011
Nieczuja-Ostrowski P., Ormianie w Polsce. Przeszłość i teraźniejszość, Toruń, "Adam Marszałek", 2011, 445 p.
[Հայերը Լեհաստանում. անցյալ և ներկա, Տորուն, «Ադամ Մարզալեկ», 1998, 445 էջ]:

Gor M. Martirosyan, *Ph.D.*
National Polytechnic University of Armenia

TYPES OF ENTREPRENEURSHIP OF ARMENIAN IMMIGRANTS IN POLAND, RESULTS OF THE DIVERSIFICATION AND CHANGE OF THEIR ACTIVITY

Keywords: immigrants, entrepreneurship, Armenians of Poland, trade, change of type of activity, diversification.

As a result of the economic crisis in Armenia in the 1990s, many people of working age (particularly men) had to emigrate from Armenia with a promise to find work and acquire financial resources. Some of those people, based on positive information from Armenian acquaintances already working in Poland regarding the possibility of working and receiving financial resources, and taking advantage of the opportunity to cross the border of Poland without the need for a visa, chose exactly that country as a place for economic emigration. Coming to Poland, most of the Armenian immigrants didn't even consider any other option than trade for acquiring financial resources, as they came to Poland with a ready-made concept of activity, based on information taken from friends, acquaintances, or relatives. In other words, they had precise information on the in-demand products in the Polish market, information regarding the volume of foreseeable costs for carrying out relevant activities, and the possibilities of renting temporary accommodation. As a result, trade was the dominant type of entrepreneurship among Armenian immigrants in Poland, particularly in the initial stage of the activity. Whereas exactly that type of activity has experienced some decline over time. Instead, Armenian immigrants started more to deal with the restaurant business and the provision of various types of services. Immigrants were relatively least likely to be involved in production both in the initial and in the implementation phase (2018) of the research.

Gor M. Martirosyan, *Doktorat*
Narodowy Uniwersytet Politechniczny Armenii

RODZAJE PRZEDSIĘBIORCZOŚCI IMIGRANTÓW ORMIŃSKICH W POLSCE, WYNIKI DYWERSYFIKACJI I ZMIANY TEJ DZIAŁALNOŚCI

Słowa kluczowe: imigranci, przedsiębiorczość, Polska Ormianie, handel, zmiana rodzaju działalności, dywersyfikacja.

W wyniku kryzysu gospodarczego w Armenii w latach 90. XX wieku dużo osób (zwłaszcza mężczyźni) w wieku produkcyjnym w celu znalezienia pracy i pozyskania środków finansowych zmuszone były podjąć decyzję o emigracji. Część z tych osób na podstawie pozytywnej informacji na temat możliwości pracy i uzyskania środków finansowych w Polsce od znajomych Ormian już pracujących w tym kraju, oraz korzystając z możliwości przekroczenia granicy polskiej bez konieczności posiadania wizy, wybrała kraj nad Wisłą jako miejsce dla emigracji zarobkowej. Przebywając do Polski większość imigrantów ormiańskich nie rozważły innej niż handel możliwości uzyskania środków finansowych, ponieważ na podstawie informacji od znajomych opuściły kraj macierzyński z gotową koncepcją działań w Polsce. Innymi słowy, mieli jasną informację o produktach, na które było zapotrzebowanie na polskim rynku, o wielkości przewidywalnych kosztów prowadzenia odpowiednich działań i możliwościach wynajęcia tymczasowego zakwaterowania. Podsumowując, można powiedzieć, że zarówno w okresie inicjacji przedsiębiorstwa, jak i w okresie badanym (2018 r.) dominującym rodzajem działalności imigrantów ormiańskich w Polsce okazał się handel, który jednak wykazuje tendencję spadkową. Jako domenę, jednak w znacznie mniejszym stopniu, wskazywano również różnego rodzaju usługi oraz gastronomię. Stosunkowo najrzadziej badani migranci zajmowali się produkcją.

Ներկայացվել է՝ 19.02.2025,
գրախոսվել է՝ 03.05.2025,
ընդունվել է՝ 10.07.2025:

ՀԵՂԻՆԱԿՆԵՐ

Ասատրյան Կարեն Սաշայի
Հայոց ազգագրության և ազատագրական պայքարի պատմության ազգային թանգարանի կրտսեր գիտաշխատող
sardarapat01.22@gmail.com

Արմենյան Գասսիա
Կալիֆորնիայի համալսարանի (UCLA) Ֆաուլերի թանգարանի համադրողական և հետազոտական օգնական, Լոս-Անջելես, ԱՄՆ
gassiaarmenian@gmail.com

Բարսեղյան Սյուզաննա Սոսի
պատմական գիտությունների թեկնածու
ՀՀ ԳԱԱ Հնագիտության և ազգագրության ինստիտուտի
Սփյուռքի ուսումնասիրության բաժնի ավագ գիտաշխատող
syuzanna.barseghyan@gmail.com

Գալստյան Միհրան Վարդգեսի
պատմական գիտությունների դոկտոր
ՀՀ ԳԱԱ Հնագիտության և ազգագրության ինստիտուտի Սոցիալական գործընթացների և ինստիտուտների մարդաբանության բաժնի վարիչ /
ԵՊՀ Մշակութաբանության ամբիոնի դոցենտ
akoonk@yahoo.com

Զախարկևիչ Ստեփան Արթուրի
պատմական գիտությունների թեկնածու, դոցենտ
Եվրոպական հումանիտար համալսարան, Վիլնյուս, Լիտվա
stepan.zakharkevich@ehu.lt

Խաչատուրյան Նելլի Ռաֆիկի
պատմական գիտությունների թեկնածու
ՀՀ ԳԱԱ Հնագիտության և ազգագրության ինստիտուտի
Սփյուռքի ուսումնասիրության բաժնի գիտաշխատող
nelli.khachaturyan02@gmail.com

Կարապետյան Ռուբեն Սուրենի
պատմական գիտությունների դոկտոր
ՀՀ ԳԱԱ Հնագիտության և ազգագրության ինստիտուտի
Սփյուռքի ուսումնասիրության բաժնի վարիչ
karapetyan.ruben.s@gmail.com

Հակոբյան Գայանե Լևոնի
պատմական գիտությունների թեկնածու
ՀՀ ԳԱԱ Հնագիտության և ազգագրության ինստիտուտի Սոցիալական գործընթացների և ինստիտուտների մարդաբանության բաժնի գիտաշխատող
gayik20@gmail.com

Հակոբյան Մարիամ Միշայի
ԵՊՀ Պատմության ֆակուլտետի ասպիրանտ
mariam-hakobyan-1010@mail.ru

Հարությունյան Մարիամ Բագրատի
ՀՀ ԳԱԱ Հնագիտության և ազգագրության ինստիտուտի
Սփյուռքի ուսումնասիրության բաժնի ավագ լաբորանտ
mariamharutyunian96@gmail.com

Ճէպէճեան Հրայր Վահէի
աստուածաբանության դոկտոր
Արաբական ծոցի Աստուածաշունչի ընկերության ընդհանուր քարտուղար, Քուվեյթ
hrayr.jebejian@gmail.com

Մարկոսյան Սալվինե Հակոբի
ՀՀ ԳԱԱ Հնագիտության և ազգագրության ինստիտուտի
Սփյուռքի ուսումնասիրության բաժնի կրտսեր գիտաշխատող
salvi.markosyan@gmail.com

Մարտիրոսյան Գոռ Մովսեսի
սոցիալական գիտությունների թեկնածու
Հայաստանի ազգային պոլիտեխնիկական համալսարանի
Աշխատաշուկայի ուսումնասիրման և մասնագիտական կարիերայի կենտրոնի տնօրեն
gormartiros@gmail.com

Ներսիսյան Սոնա Արայիկի
պատմական գիտությունների թեկնածու
ՀՀ ԳԱԱ Հնագիտության և ազգագրության ինստիտուտի
Սփյուռքի ուսումնասիրության բաժնի ավագ գիտաշխատող
sona.nersisyan2006@gmail.com

Պողոսյան Սվետլանա Հայկի
պատմական գիտությունների թեկնածու
Հայոց ազգագրության և ազատագրական պայքարի պատմության ազգային թանգարանի փոխտնօրեն / ՀՀ ԳԱԱ Հնագիտության և ազգագրության ինստիտուտի
Մշակութային մարդաբանության բաժնի ավագ գիտաշխատող
poghosyansvetlana26@aspu.am

Սվազլյան Վերժինե Գառնիկի
բանասիրական գիտությունների դոկտոր
ՀՀ ԳԱԱ Հնագիտության և ազգագրության ինստիտուտի
Բանագիտության բաժնի առաջատար գիտաշխատող,
ՀՀ Գիտության վաստակավոր գործիչ
vsvaz333@yahoo.com

Վարդանյան Հրաձին Վարդանի
պատմական գիտությունների թեկնածու
ԵՊՀ Պատմության ֆակուլտետի ասիստենտ
vardanyan.h@ysu.am

Տանաջյան Լուսինե Ասատուրի
պատմական գիտությունների թեկնածու
ՀՀ ԳԱԱ Հնագիտության և ազգագրության ինստիտուտի
Սփյուռքի ուսումնասիրության բաժնի ավագ գիտաշխատող
lusine.tanajyan@gmail.com

Օհանջանյան Ռուբեն Սամվելի
պատմական գիտությունների թեկնածու
ՀՀ ԳԱԱ Հնագիտության և ազգագրության ինստիտուտի Սոցիալական գործընթացների և ինստիտուտների մարդաբանության բաժնի գիտաշխատող
r.ohanjanyan@mail.ru

CONTENTS

A. RESEARCH PAPERS

I. RA - DIASPORA, RA - ABROAD: MUTUAL CONNECTIONS AND INTERACTIONS

Ruben Karapetyan
On the Migration Ties between the Diaspora and the Republic of Armenia 8

Hratsin Vardanyan
Mariam Hakobyan
The Policy of Identity as a Component of State–Diaspora Cooperation
(the Case of RA–Diaspora Relations) 21

Hrair Jebejian
Relations between the Armenian Communities in the Near East
and the Republic of Armenia: Current Trends, Challenges and Opportunities 34

Gayane Hakobyan
Social-Cultural Life of New Migrants in the Diaspora:
the Viewpoint of Relatives in Armenia 48

Sona Nersisyan
Experience of Integration of Russian and Indian Immigrants in Armenia 59

II. ARMENIAN COMMUNITIES OF EASTERN EUROPE

Stepan Zakharkevich
Culture of Memory of Armenian Communities in Eastern Europe and the Influence
of Historical Policies and National Projects at the Present Stage 72

Svetlana Poghosyan
Sociocultural Features of the Armenian Community of Varna:
Situation, Trends and Developments 89

Gor Martirosyan
Types of Entrepreneurship of Armenian Immigrants in Poland,
Results of the Diversification and Change of Their Activity 103

Lusine Tanajyan
Suzanna Barseghyan
Armenians in Czech Republic: Peculiarities of Community Life 113

III. ARMENIAN COMMUNITY OF THE USA

Mihran Galstyan
The Term "Repatriation" in the Context of Modern Processes of Diaspora:
the Case Study of the Armenian Community of Los Angeles 126

Verjine Svazlian
The Level of Preserving Armenianness among the Armenian-Americans
according to the Inscribed Materials of the Oral Tradition 139

IV. THEORETICAL ISSUES

Nelli Khachaturian
Mariam Harutyunyan
Religious Transmission in the Family: Theoretical Approach 156

Ruben Ohanjanyan
Features of the Application of the Bogardus Social Distance Measurement Scale 167

B. VARIA

V. REPORTS

Karen Asatryan
Certificates of the Educational System of the Armenians of Constantinople
(Late 19th – Early 20th Centuries) 176

Salvine Markosyan
The Role of Weekly Newsletter "Hayastan" in the Cultural Life
of Armenians in Constantinople 183

VI. EXHIBITION

Gassia Armenian
Remain in Light: Visions of Homeland and Diaspora 188

VII. REVIEWS

Tork Dalalyan
Lusine Hayriyan
Anahit Khechoyan
Études arméniennes contemporaines, 2023, № 15 :
La presse de langue arméniennes en France et la création d'un espace transnational 200

Antranik Dakessian
Haigazian Armenological Review: Four Books of the 43th and 44th Volumes 204

VIII. EVENTS

Suzan Pirnalyan
The 40th Year of Summer Intensive Course of Armenian Language and Culture:
an Armenian World in Venice 218

PHOTOS 221

INFORMATION ABOUT AUTHORS 230

СОДЕРЖАНИЕ

А. ИССЛЕДОВАТЕЛЬСКИЕ СТАТЬИ

I. РА–ДИАСПОРА, РА–ЗАГРАНИЦА: ВЗАИМНЫЕ СВЯЗИ И ВЗАИМОДЕЙСТВИЯ

Рубен Карапетян
О миграционных связях Диаспоры с Республикой Армения 8

Грацин Варданян
Мариам Акопян
Политика идентичности как составляющая
сотрудничества государства с диаспорой 21

Грайр Джебеджян
Отношения между армянскими общинами Ближнего Востока
и Республикой Армения: современные тенденции, вызовы и возможности 34

Гаяне Акопян
Социально-культурная жизнь новых мигрантов в Диаспоре:
точка зрения родственников в Армении 48

Сона Нерсисян
Опыт интеграции российских и индийских иммигрантов в Армении 59

II. АРМЯНСКИЕ ОБЩИНЫ ВОСТОЧНОЙ ЕВРОПЫ

Степан Захаркевич
Культура памяти армянских общин Восточной Европы и влияние на нее
исторической политики и национальных проектов в современном этапе 72

Светлана Погосян
Социально-культурные особенности армянской общины Варны:
ситуация, тенденции и развития 89

Гор Мартиросян
Виды экономической деятельности армянских иммигрантов в Польше,
результаты диверсификации и изменения этих видов деятельности 103

Лусине Танаджян
Сюзанна Барсегян
Армяне в Чешской Республике: особенности общинной жизни 113

III. АРМЯНСКАЯ ОБЩИНА США

Мигран Галстян
Термин «репатриация» в контексте современных процессов Диаспоры:
пример армянской общины Лос-Анджелеса 126

Вержине Свазлян
Уровень сохранения армянства у американских армян
по материалам устной культуры 139

IV. ТЕОРЕТИЧЕСКИЕ ВОПРОСЫ

Нелли Хачатурян
Мариам Арутюнян
Трансмиссия религиозности в семье: теоретические проблемы 156

Рубен Оганджанян
Особенности применения шкалы Богардуса, измеряющей социальную дистанцию 167

Б. VARIA

V. СООБЩЕНИЯ

Карен Асатрян
Аттестаты системы образования константинопольских армян
(конец 19-го – начало 20-го вв.) 176

Салвине Маркосян
Роль газеты «Айастан» в культурной жизни армян Константинополя 183

VI. ВЫСТАВКА

Кассия Арменян
Да пребудет с вами свет: видения родины и диаспоры 188

VII. РЕЦЕНЗИИ

Торк Далалян
Лусине Айриян
Анаит Хечоян
Études arméniennes contemporaines, 2023, № 15 : Армяноязычная пресса
во Франции и создание транснационального пространства 200

Андраник Дакесян
Haigazian Armenological Review: Четыре книги 43-го и 44-го томов 204

VIII. СОБЫТИЯ

Сюзан Пырналян
40 лет интенсивного летнего курса армянского языка и культуры:
армянский мир в Венеции 218

ФОТОГРАФИИ 221

СВЕДЕНИЯ ОБ АВТОРАХ 230

ՀՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ
ԵՒ
ԱԶԳԱԳՐՈՒԹՅԱՆ
ԻՆՍՏԻՏՈՒՏԻ
ԱՇԽԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ
7

անգլերենի խմբագիրներ՝ Լուսինե Տանաջյան
Անահիտ Խեչոյան

ռուսերենի խմբագիր՝ Նելլի Խաչատուրյան

տեխնիկական խմբագիրներ՝ Լուսինե Տանաջյան
Սյուզաննա Բարսեղյան
Սալվինե Մարկոսյան

ձևավորող և էջադրող՝ Արթուր Հարությունյան

Շապիկի վրա՝

Մուրադ-Ռաֆայելյան վարժարանի (Վենետիկ) պատկերով բացիկ՝
Քարոլ Մարք-Բուարե Գաֆտանճյանի ընտանեկան արխիվից (Ֆրանսիա)։

ՀԱԻԱ 7